

ծաղկեցնէ, որպէս զի ինքն ալ միշտ տալու բերք ունենայ. ապա թէ ոչ՝ աւ մէն անգամ տալիքը թէ որ ստակ ըլլայ, ստակը շուտով կը հասնի, ու վերջի աստիճան կ'աղբընայ. իսկ երբոր ստակի աղբիւրը ունի, որ են ճարտարութեանք, թէ որ երկրէն ստակ ելլէ՝ չվախնար, որովհետեւ ստակը մէկ դիէն ալ կը մտնէ ճարտարութեանց ուժով. և անկարելի է որ երկիր մը տուածէն աւելի ստակ չվաստրկի՝ երբոր ինչպէս որ պէտք է ճարտարութեանց մէջ զարգացած է:

Հ. Տ. Թ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Պարիսէնի կամ կինամոն՝¹:

ՊԱՓՆԻՒՒ տեսակ ծառերուն մէջ շատ ծառեր ու թուփեր կան որ տերեւին կամ ծաղկընին նման ըլլալուն համար միայն դափնի կ'ըսուին. ասոնց տեսակէն կը սեպուին մեխակը, կինամոնի ծառը և այլն: Սեխակի վրայ ուրիշ ատեն խօսած ըլլալով՝ հոս պատկերը միայն դրինք. հիմայ քանի մը խօսք ալ կինամոնի ծառին վրայ զրուցենք, որ անթիւ օգտակար յատկութեանցը ու աղուոր համեմին համար՝ ան տեսակ ծառերուն մէջ ամենէն երևելին կը սեպուի: Բարձրութիւնը ինչուան տասնուհինգ քսան ոտք կ'ըլլայ, և տրամագիծը կամ հաստութիւնը զրեթէ մէկուկէս ոտք: Կեղևը դրսուանց մուր մոխրագոյն է, ներսէն կարմրագոյն դեղին: Տերեւները երկայն հաւկըթաձև են, վրայի կողմընին ողորկ ու մթնագոյն է, տակի կողմերնին քիչ մը մոխրագոյն. դէպ 'ի եր-

կայնութեանը ձգուած իրեք իրեք հաստ ջղեր ունին. աս տերեւներուն երկայնութիւնն է գրեթէ հինգ բլաչափ: Ծաղկընները մանր են, ներսը դեղին՝ դուրսը բրդոտ: Պտուղը մուր կապոյտ է՝ կէս բլաչափ երկայնութեամբ. ասոր մէջը կանաչ ու եղոտ կակուղ նիւթ մը կայ. աս կակուղ նիւթին մէջ ալ կարծր կ'ապուլ նուշ մը կայ, ու մէջը ծիրանեգոյն միջուկ մը:

Բնչափ կինամոնն որ ատենով հոլանտացիք աշխարհիս ամէն կողմերը կը տանէին՝ Սէյլան կղզոյն ծովեզերքը գրեթէ 40 մղոն տեղի մէջ միայն կը բուսներ. հոլանտացւոց շահասիրութիւնը ան աստիճանի սաստիկ էր որ Սէյլան կղզոյն մէջ եղած փորթուկացիները դուրս քշելէն ետքը, Սալապարի ծովեզերքը Վոչին բաւած թագաւորութեանն ալ տիրեցին, որպէս զի ան տեղի բուսած վայրի կինամոնին վաճառականութիւնն ալ իրենց անցնի. բայց յետոյ տեսնելով որ շահանալուն համար գինն ալ կը ցածնայ, Վոչինի մէջ բուսածները բոլոր փափուցին. անով ալ կարելի չեղաւ որ կինամոնը Սէյլան կղզին մէջ միայն արգիւտի. ասորուան օրս կը բուսնի նաև Վաղղիոյ կղզին, Վայեննա, Բնթիլեան կղզիները և ինչուան փարիզի տնկաբանական պարտէզը՝ ձմեռը տաք ջերմանոցի մէջ դրուելով:

Կինամոնը փետրուարի կամ մարտի մէջ ծաղիկ կուտայ, ու տարին տասուերկու ամիս կանաչ կը մնայ: Տարւոյն մէջ երկու անգամ կը քաղեն պտուղը. մէյմը ապրիլէն ինչուան օգոստոս՝ անձրեային եղանակներուն, մէյմըն ալ նոյեմբերէն ինչուան յունուար չոր եղանակներուն: Իրեք տարեկան եղած ճիւղերը կը կտրեն ու սուր կտրոցով մը վրայի կեղևը կը սկրդեն. յետոյ տակի կեղևն ալ ձգքելով կը հանեն, ու մէջէ մէջ դնելով արևուն մէջ կը թողուն. քանի որ կը չորնայ՝ երթալով կը գալարի կը կլորի: Երկու իրեք տարեկն ծառը նորէն կեղև կը կապէ ու ճիւղերը կուտայ:

¹ Տարին: Լատ. Cinnamomum կամ Laurus cinnamomum. Իտ. Cannella կամ Cinnamomo. Գր. Cannelle. Մեր մէջ ալ ըստ գրոց կինամոնն:

² Տես հատ. Ե. 288:



Սեխի :

Վինամոնը մաս մ'ալ չունի որ բանի չգայ . արմատին հոտաւէտ կեղեկն տեսակ մը մաքուր ու դեղնագոյն եղ կ'ելէ որ շատ առողջարար յատկութիւններ ունենալուն՝ հնդիկները շատ կը գործածեն . աս կեղեկն քափուր՝ ալ կ'ելէ , որ շատ զգուշութեամբ կը ժողվեն ու երկրորդի հարուստներուն կը ծախեն : Վինամոնին հին բուսները ծունկ ծունկ են , ու այլ և այլ բաներ շինելու ալ կրնան գործածուիլ : Տերեւները անուշահոտ ու ախորժահամ են , և թորանոցով ասոնցմէ եղ ալ կը հանեն : Դաղկերներուն հոտը անանկ անուշ կը բուրէ որ մղոններով հեռու տեղուանք կ'երթայ անուշահոտութիւնը . ասոնցմէ ալ տեսակ մը ջուր կը հանուի որ կուրծքի տկարութեան շատ օգտակար է : Պտղէն թորանոցով անուշահոտ եղ

մը կը հանեն . իսկ երբոր խաշեն՝ տեսակ մը թանձր եղ կ'ելէ որ մարմնոյ ուռեցքներու կամ ճղմուածի ու խախտած ոսկորներ շփելու կը գործածուի ու Լարոպա կը բերուի կունտ կունտ . աս եղէն մոմալ կը շինուի , որ անուշահոտութեամբ կը լեցնէ ան տեղը ուր որ վառուի :

Նա այսչափ տեսակ տեսակ բաներու կը գործածուին կինամոնին արմատը , բունը , տերեւները , ծաղկներն ու պտուղները . բայց մեղի ամենէն ծանօթ կեղեկն է , որ թէ դեղի և թէ համեմի տեղ շատ կը գործածենք : Բուսական համեմներուն մէջ ամենէն ախորժելին ասիկայ է . վասն զի մարդուս կենդանական ոգիքը վառ կը պահէ , ջղերը կ'ուժովցնէ , ստամոքսը կը զօրացնէ , և այլն : Ըզուելի դեղերը ասով կ'անուշանան , շատ կերակուրներ ասով համ կ'ունենան . վերջապէս աս

աղուոր համեմունքին յարգը ամենուն ծանօթ ըլլալով՝ աւելորդ կը սեպենք խօսքերնիս ալ աւելի երկնցընելը :

ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Լճեգահային դրուիւն :

Լճեգահային : — Լճեգահային դրու թեան մէջ տասնը հինգ մեծ մոլորակներէն զատ քսան հատ ալ երկրորդական մանր մոլորակներ կան որ հինգ մեծ մոլորակաց վրայ կը դառնան , և անոնց արեանէակ կ'ըսուին : Հիները մէկ արեանէակ մը միայն գիտէին , որ է լուսինը , ան ալ մոլորակաց կարգը կը դնէին . իսկ մէկալ տասնըինը հատը դիտակին գիւտէն ետե գտնուեցան : Շատ հաւանական է որ աս արբանեակները իրենց կեդրոնի մեծ մոլորակին վրայ դառնալու ատեն՝ իրենց առանցքին վրայ ալ դառնան , ինչպէս յայտնի է աս կարծիքը երկրիս արբանեակին վրայ :

Լուսին : — Լուսին ետե մեզի աւելի լուսաւոր երեցող աստղը լուսինն է , մեզմէ 96 հազար փարսախ հեռու , և դրեթէ քսանը եօթն ու կէս օրուան մէջ երկրիս վրայ կը պտըտի , նոյնչափ ժամանակի մէջ ալ ինքիւ վրայ : Լքուկէս 50 անգամ պզտիկ է , և իրեն զանգուածը արեւուն զանգուածին հետ հաւասարակշռելու համար 23 միլիոն լուսնի պէս մարմին պէտք է : Լուսինն մէջ ծանր մարմինները աւելի թեթեւ կը կշռեն քան թէ երկրիս վրայ . ինչպէս՝ թէ որ մարմին մը հոս 10 կը կշռէ նէ , հոն 2 կը կշռէ : Գիտակով լուսինն մէջ լեռներ , ձորեր , դաշտեր կը տեսնուին . և վասն զի թէ որ դիտակդ երկու անգամ կը մեծցընէ , ան ատեն դիմացի առարկան առջինին կէս հեռաւորութիւնը կ'ըլենայ . թէ որ հարիւր կամ հազար անգամ կը մեծցընէ , ան ատեն նոյն առարկան հարիւր կամ հազար անգամ կը մօտիկնայ : Ուրեմն լուսինն որ մեզմէ 96 հազար փարսախ հեռու է ըսինք , թէ որ

հազար անգամ խոշորցընող դիտակով նայելու ըլլանք , ան ատեն հազար անգամ կը մօտիկնայ մեզի , այսինքն մեզմէ 96 փարսախ հեռու կ'ըլլայ : Ինչ որ դիտակնիս 3 հազար անգամ կը մեծցընէ , լուսինը մեզմէ 32 փարսախ հեռու կը տեսնենք , ան ատեն հարկաւ լուսնին մէջի լեռները , ձորերը , դաշտերը , և այլն որոշ կը տեսնուին . բայց որովհետեւ ինչուան 6 հազար անգամ մեծցընող դիտակներ ալ կան , ան ատեն այնպէս կը տեսնենք՝ իբր թէ լուսինը մեզմէ 16 փարսախ հեռուն , կամ թէ կեցած տեղերնէս 35 միլիոն չափ հեռու մեծ լեռ մը ըլլար : Երբ և որ լուսնի լեռներուն բարձրութիւնն ալ դիւրաւ կը չափուի . և թէպէտ լուսինը երկրէս շատ պզտիկ է , բայց մէջը լեռկայ որ Լքրոպայի ամենէն բարձր լեռներէն ալ բարձր է . ինչպէս Լքրոպայի մէջ ամենէն բարձր լեռը Սպիտակ լեռն է որ 4,800 մեթր բարձրութիւն ունի . իսկ լուսնի մէջ ինչուան 7,800 մեթր բարձրութեամբ լեռ կայ :

Լճեգահային Լուսնաբան : — Լուսն թագը չորս լուսին կամ արբանեակ ունի , որոնք իր վրան պտըտելով՝ գիշերները մեր լուսնին պէս կը լուսաւորեն զինքը : Երոնցմէ երրորդը նոր գտնուած մանր մոլորակներէն նաեւ հրատէն ալ մեծ է : Ոմանք կ'ըսեն թէ աս արբանեակները Լուսնի թագին կտորուանքներն են որ իրմէ բաժնուեր են :

Լճեգահային Լքրաբան : — Լքրաբան ալ պզտիկ արեգակնային դրուութիւն մը կրնանք սեպել . վասն զի վրան եօթը հատ ուրիշ մանր մոլորակներ կամ արբանեակներ կը պտըտին : Երոնցմէ վեցերորդն ու եօթներորդը խիստ մեծ են . և ըստ վերջին դիտողութեանց՝ աս եօթներորդ արբանեակը ուրիշ ամէն մոլորակաց արբանեակներէն ու նաեւ հրատէն ալ մեծ է . բայց առաջինն ու երկրորդը խիստ պզտիկ են , և առաջինը դրեթէ 24 ժամուան մէջ Լքրաբանին վրայ կը դառնայ :

Լճեգահային Ուրանոս : — Ուրանոսին վրայ վեց արբանեակ կը պտըտի , բայց